

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ՎԱՀԱՆ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՐԳՍԵԱՆ
(1954-2011)

Լեզուաբան, թարգմանիչ, ԵՊՀ Ռումանական Բանասիրության Ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Սարգսեանը ծնունդ է 1954ին, Երեւանում: 1979ին աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտետի ֆրանսերէնի բաժինը: Յետագայում մասնագիտական գործունեութիւն է ծաւալել բազմաթիւ երփտասարդական, գիտական, պետական, հասարակական կազմակերպութիւններում ինչպէս Հայաստանում, այնպէս էլ արտերկրում (1983-1987՝ Կուրա): Հայրենիք վերադարձին նա շարունակել է իր մասնագիտական գործունեութիւնը հասարակական, գիտական եւ մշակութային կազմակերպութիւններում: 1987-1993՝ աշխատել է *Գանչ* թերթի խմբագրութիւնում որպէս պատասխանատու քարտուղար:

1994ից ԵՊՀում իսպանական եւ ֆրանսիական հեղինակաւոր կազմակերպութիւնների, պետական կառոյցների եւ գիտական ու գիտամշակութային հիմնադրամների հովանաւորութեամբ իրականացրել է բազմաթիւ հետազոտութիւններ, որոնք ներառում են գիտական հետաքրքրութիւնների լայն շրջանակ եւ առնչում են հայագիտութեան, ընդհանուր լեզուաբանութեան, ռոմանական բանասիրութեան, իսպանագիտութեան, իսպանական գրականութեան, թարգմանաբանութեան եւ բազմազգիտութեան հիմնահարցերին: Նրա աւանդը մեծ է ոչ միայն ԵՊՀ գիտաուսումնական կեանքում, այլեւ ժամանակակից հայ լեզուաբանութեան, բանասիրութեան, թարգմանաբանութեան ոլորտներում: Նրա թեմատիկ հետազոտութիւնների արդիւնքները հրապարակուել են բազմաթիւ հեղինակաւոր գիտական հանդէսներում, հանրագիտարաններում ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Հայաստանից դուրս (Ռուսաստան, Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա):

2003ից գրադէցրել է ԵՊՀ Ռումանական Բանասիրության Ամբիոնի վարիչի պաշտօնը: Ընտրուել է Բասկեան Թագաւորական Ակադեմիայի անդամ, համահեղինակել է սերուանտէսագիտական միջազգային հանրագիտարանը, հրատարակել է 70ից ւուելի գիտական յօդուածներ, մենագրութիւններ, հետազոտութիւններ: Նրա գրչին են պատկանում հայ իրականութեան համար բացառիկ արժէք ունեցող մի շարք համաշխարհային մեծութեան իսպանացի, բասկ, ֆրանսիացի գրողների, լեզուաբանների, ճանապարհորդների գործերի թարգմանութիւնները՝ Միգել Սեր-

ուանտեսի *Ղոն Կիխոտ Լամանչացին, Նրատական Նովելները*, Ֆր. Քեյե-դոյի *Բուսկոնի Գեանքը*, Խ. Ս. Սատրուստեգիի *Մահուան Թաքնուած Դէմքը*, Խուան Անտոնիօ Մոզլիի *Պերու Արարկան*, Գաբրիել Արեստիի *Քար Եւ Երկիրը*, Ժոզեֆ Ագուստին Շաօյի *Այտորի Լեզենդը* եւն.:

Սարգսեանի ղեկավարութեամբ ամբիոնում նախաձեռնուել եւ իրականացուել են բազմաթիւ թարգմանութիւններ, սեմինարներ եւ հանդիպումներ օտարերկրեայ (իսպանացի, ֆրանսիացի, բասկ) մասնագետների մասնակցութեամբ: Իր նախաձեռնութեամբ ամբիոնում 2010ից մեկնարկել է ուսանողական թարգմանաբանական գիտաժողովը, որին յաջորդէ ուսանողական թարգմանութիւնների «Օաղիկ Թարգմանչաց» մատենաշարի առաջին ժողովածուն: Նախաձեռնուել եւ ղեկավարել է նաեւ *Ռոմանական Բանասիրութեան Հանդէտը*, բասկեր-հայեր, հայ-իսպանական մշակութային առնչութիւններին վերաբերող փաստափառագրական նիւթերի մատենաշարը: Խմբագրել է հայ լեզուաբանութեան համար առանձնաշատուկ արժէք ունեցող ակադեմիկոս Գեորգ Ջահուկեանի *Հայերէնի Ստուգաբանական Բառարանը* եւ հեղինակել հայ իրականութեան մէջ առաջին բացառիկ *Հայ-Իսպաներէն Բառարանը* (2004):

Սահացել է 2011ի Յունուարի 21ին, Երեւանում:

Ազգ



ՊԵՏՐՈՍ ՆԱՇԵԱՆ

(1933-2012)

Արժանթինահայ գրագետ, ուսուցիչ, խմբագիր ու հանրային գործիչ Պետրոս Նաճեանը ծնած է Ճարապլուս (Սուրիա), 1933ին: 1954-1959՝ սկսած է իր ուսուցչական ասպարէզը որպէս Տէր-Զօրի հայկական դպրոցի ուսուցիչ եւ տնօրէն: 1960-1961ին Հալէպի *Արեւելք* օրաթերթի փոխ-խմբագիր եղած է, իսկ նոյն տասնամեակին «Հայկազեան» Ազգային Վարժարանի եւ «Քարէն Եփփէ» Ճեմարանի հայոց պատմութեան եւ գրականութեան ուսուցիչ, իսկ 1968-1970ին վարած է Ճեմարանի տնօրէնութիւնը:

1970ին փոխադրուած է Պուենոս Այրէս, ուր ստանձնած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթ. Հաստատութեան տնօրէնութիւնը, զոր վարած է աւելի քան 35 տարիներ: 1971-1986ին նաեւ վարած է *Արմենիա* օրաթերթի (1989էն ի վեր շաբաթաթերթ) խմբագրութիւնը: 1986էն ետք նուիրուած է գրական աշխատանքներու, մնալով սփիւռքահայ մամուլի մնայուն աշխատակից:

Հաճեան հրատարակած է բազմաթիւ գիրքեր, որոնց շարքին՝ պատմութիւններու երեք հատորներ (*Հրամեցէ՛ք Պարոններ*, Պուենոս Այրես, 1995. *Կար ու Չկար*, Պուենոս Այրես, 2003. *Կարկենսիշ*, Հալէպ, 2005). առաջին ու երրորդը միացեալ հատորով լոյս տեսած են 2008ին, Երեւան, *Ճապարհի Դէպի Կարկենսիշ* խորագրով, իսկ առաջինը սպաներէնի թարգմանուած է Պերճ Աճմեանի կողմէ, 2005ին: Ան պատրաստած է զանազան դասագիրքեր, որոնցմէ առանձին շարքով լոյս տեսած է *Պարզ Քերականութիւնը* (1986-1987, երեք հատոր):

Ան նաեւ պատրաստած է հայագիտական բնոյթի, սակայն հանրամատչելի թերութով շարք մը գործեր, ինչպէս՝ *Հայ Մտքի Մշակներ* (Պուենոս Այրես, 1987 եւ 1990, երկու հատորով, ընդգրկելով Ե.-ԺԴ. դարերը), որ միաժամանակ լոյս տեսած է հայերէն եւ սպաներէն (թարգմ.՝ Վարդան Մատթէոսեանի), *Լոեցուած Խօսքը. Հայկական Յեղասպանութեան Մտաւորական Զոհերը* (սպաներէն, Պուենոս Այրես, 2000, թարգմ.՝ Վ. Մատթէոսեանի. հայերէն բնագիրը մնացած է անտիպ) եւ *Հարիւր Տարի, Հարիւր Պատմութիւն* (Պուենոս Այրես, 2001, սպաներէն՝ Պուենոս Այրես, 2007, թարգմ.՝ Վարդան Մատթէոսեան, անգլերէն՝ Հալէպ, 2009, թարգմ.՝ Արիս Մեւակ): Առանձնապէս նկատառելի է *Հարաւը Սփիւռքի Մէջ* (Հալէպ, 2008) յօդուածներու ժողովածուն, որուն առաջին մասը կը կազմէ արժանթինահայ համայնքի վերջին յիսնամեակին անդրադարձող միակ հայերէն հատորը:

Հաճեանի շուրջ 60ամեայ գրական, հրապարակախօսական, հանրային եւ ուսուցչական ասպարէզներու վաստակը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի կողմէ գնահատուած է 1984ին «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, իսկ Հայաստանի Հանրապետութեան կողմէ՝ 2010ին, «Մովսէս Խորենացի» շքանշանով:

Պետրոս Հաճեան մահացաւ 4 Սեպտեմբեր 2012ին, յետ կարճատեւ հիւանդութեան, Պուենոս Այրեսի մէջ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

ՆԻԿՈԼԱՅ ԳԱՐԵԳԻՆԻ ՔՈԹԱՆՁԵԱՆ (1928-2013)



Արուեստաբան, գեղանկարիչ, ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի առաջատար գիտաշխատող Նիկոլայ Քոթանջեանը ծնունդ է 1928 Մարտի 15ին Գանձակում (այժմ՝ Գեանջա, Ադրբեջան): Մերը դէպի արուեստը եւ արտասովոր գեղարուեստական ընդունակութիւնները

դրսեւորուել են մանկութեան տարիներէից: 1944ին ընդունուել է Երեւանի Փանոս Թերլեմեզեանի Անուան Գեղարուեստի Ուսումնարան, իսկ երկու տարի անց՝ Երեւանի Գեղարուեստի Ինստիտուտի Գեղանկարչութեան Բաժին, որը գերազանցութեամբ ամարտել է 1952ին: Ապա ընդունուել է Գեղարուեստի Ակադեմիային առընթեր Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Ռեալիսի Անուան Գեղանկարչութեան, Քանդակագործութեան եւ Ճարտարապետութեան Ինստիտուտի ասպիրանտուրա՝ Գեղարուեստի Ակադեմիայի նախագահ, ճանաչուած նկարիչ Բորիս Իոգանսոնի ղեկավարութեամբ: 1957ին Քոթանջեանն ամարտում է ասպիրանտուրան եւ *Խաղողահաւաքը Արարատեան Դաշտում* ատենախօսական նկարի հա-մար արժանանում պետական յանձնաժողովի Բարձր գնահատականին: Աշխատանքը ցուցադրում է Ռուսական Թանգարանում (Լենինգրադ) եւ Մոսկուայում, նկարը ձեռք է բերում ԽՍՀՄ Մշակոյթի Նախարարութիւնը եւ յանձնում Սարատովի Գեղարուեստի Թանգարանին: Տպագրում են նաեւ բացիկներ այդ պատկերով:

Նիկոլայ Քոթանջեանը, հրաժարուելով Ռեալիսի Անուան Ինստիտուտում դասաւանդելու առաջարկից, ասպիրանտուրան ամարտելուց յետոյ վերադառնում է Երեւան եւ ներգրաւուում Հայաստանի մշակութային կեանքում: Հայրենիքում նա ոչ միայն մշտապէս մասնակցում է պատկերահանդէսների, այլեւ բաւական եռանդուն՝ Նկարիչների Միութեան գործունէութեանը, ղեկավարում Երիտասարդական Բաժանմունքը եւ միջանի անգամ ընտրում վարչութեան անդամ: 1960ականների վերջերից նա հեռանում է հասարակական կեանքից եւ բոլորանուէր տրւում ստեղծագործելուն՝ զբաղուելով գեղանկարչութեամբ եւ գծանկարչութեամբ, ինչպէս նաեւ կոթողային գեղանկարչութեամբ: Արուեստագէտի մի շարք աշխատանքներ պահում են Հայաստանի Ազգային Պատկերասրահում, Մոսկուայի Արեւելքի Ժողովուրդների Արուեստների Թանգարանում. Երեւանի, Սանկտ Պետերբուրգի, Դուբնայի, Փարիզի, Մայնի Ֆրանկֆուրտի, Չիքագոյի, Վաշինգտոնի, Լոս Անջելըսի եւ այլ քաղաքների մասնաւոր հաւաքածուներում:

Բացառիկ արգասաւոր էր Քոթանջեանի մանկավարժական գործունէութիւնը. տասնամեակներ շարունակ նա ղեկավարել է Կանազ Գործարանի մշակոյթի պալատին առընթեր գեղարուեստի ստուդիան՝ դաստիարակելով շնորհալի նկարիչներ եւ, պարզապէս, շատ երիտասարդների հաղորդակից դարձնելով արուեստին:

Գեղանկարչութեան զուգահեռ Քոթանջեանն զբաղուել է արուեստագիտութեամբ: Նրա արուեստագիտական լուրջ եւ անդուլ գործունէութիւնը սկսուեց 1972ից, երբ որպէս գիտաշխատող ընդունուեց ՀՄՄՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտ՝ հարազատ գիտական օջախում աշխատելով

շուրջ քառասուն տարի՝ մինչև կեսերի վերջին օրերը։ Նրա ուսումնասիրությունների հիմնական առարկան հայկական միջնադարեան կոթողային գեղանկարչությունն էր և գրքարուեստը։ Ընդ որում՝ նա զբաղում էր ոչ միայն գեղանկարչության պատմությամբ, այլև տեսությամբ։

Նիկոլայ Քոթանջեանի *Tsvet V Rannesrednevekovoy Jivopisi Armenii* (Գոյնը Հայաստանի վաղ միջնադարեան գեղանկարչությունում) մենագրությունը (1978, մինչ այդ որպես գիտական թեզ պաշտպանած Մոսկովայի Պետական Համալսարանում) բացառիկ արժեքատր ուսումնասիրություն է, առաջին տեսական հետազոտությունը ոչ միայն հայ արուեստաբանական գրականության, այլև եզակի երևույթ ողջ խորհրդային արուեստագիտության պատմության մեջ, որտեղ հեղինակն առաջադրեց գոյնի ուսումնասիրման բոլորովին նոր մեթոդ։ Նա գոյնի կառուցումաձևը քննում է չորս հիմնական տեսանկյուններով, ինչը թույլ է տալիս առաւել ամբողջական բացայայտել գեղանկարչական ստեղծագործության երանգային լուծման էությունը՝ գունային տոնայնություն, գունային կառուցումաձև, գոյնի յօրինումաձև և գոյնի տարածական կառուցումաձև։ Քոթանջեանի տեսական աշխատությունները մեծ հետաքրքրություն առաջացրին միջնադարագետների շրջանում։ Նա գոյնի խնդիրն ուսումնասիրեց յաջորդ դարաշրջանների յուշարձանների նկարներով եւս, այդ ուսումնասիրություններից է Տաթևի Վանքի (Ժ. դ.) որմնանկարչութեանը նուիրումաձև ռուսերեն մենագրությունը (անտիպ) և միջնադարեան մանրանկարչութեան գոյնի մասին քնդհանրացնող յօդուածը՝ գերմաներեն (*Die Farbe in der armenischen Buchmalerei des Mittelalters – Wiederentdeckung einer alten Kulturlandschaft*, Bochum, 1995)։

Յատկապէս գնահատելի են հայ արուեստի ամենաքիչ ուսումնասիրուած ոլորտին՝ որմնանկարչութեանը վերաբերող Քոթանջեանի աշխատությունները։ Այդ գործունէությունը յիշաւի անձնուիրություն էր։ Ինքնուրոյն յաղթահարելով բազում խոչընդոտներ՝ նա շրջագայել է ողջ խորհրդային Հայաստանով, ուսումնասիրել գրեթէ բոլոր յուշարձանները, հետազօտել որմնանկարների ենթաշերտերը, ներկերի բաղադրությունը, պատկերագրությունը և գեղարուեստական առանձնայատկությունները։ Ուսումնասիրությունների արդիւնքում Քոթանջեանը սահմանել է հայ որմնանկարչութեան համար մի շարք չափազանց կարեւոր դրոյթներ։

Որմնանկարչութեանը վերաբերող նրա աշխատություններից են Տիգրան Հոնենցի կառուցած Անիի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու որմնանկարներին նուիրումաձև ուսումնասիրությունը (*"The Frescoes in the Church of St. Gregory the Illuminator Founded by Tigran Honents in Ani"*, *Armenian Review*, 1990, v.43, n. 4/172, p. 41-65, համահեղինակ՝ Իրինա Դրամբեան),

հայկական կոթողային գեղանկարչության պատմության ամփոփիչ յօդուածը ("Les Décors Peints des Eglises d'Arménie", *Armenia Sacra. Mémoire Chrétienne des Arméniens (VI-XVIII siècles)*, Paris, Musée du Louvre, 2007), այլ յուշարձանների մասին մի շարք յօդուածներ:

Մեծ է Քոթանջեանի ներդրումը նաեւ գրքարուեստի ուսումնասիրման գործում: Այդ ոլորտում նրա ամենանշանակալից աշխատութիւններն են Օղորութի եւ Էջմիածնի աւետարաններին նուիրուած ուսումնասիրութիւնները: Նրա *Օղորութի Աւետարանը 974 թ.* (2006)՝ պահպանուած նկարազարդուած աւետարանների ամենավաղ օրինակներից՝ Ժ. դարի այդ հրաշալի յուշարձանի մասին առաջին հրապարակումն է: Եւ եթէ նա առաջինն էր, ով Օղորութի Աւետարանը ներմուծեց գիտական շրջանակ, ապա Էջմիածնի Աւետարանը՝ ընդհակառակը, ամենահանրայայտ հայկական ձեռագրերից է, բազմաթիւ անգամ արժանացած հայ եւ եւրոպացի գիտնականների ուշադրութեանը: Այդուհանդերձ, Քոթանջեանն այդ ձեռագրի ուսումնասիրման գործում եւս նոր խօսք ասաց իր *Էջմիածնի Աւետարանը* (Երեւան, 2000) մենագրութեամբ. նա ոչ միայն հանրագումարի բերեց ձեռագրի հարիւրամեայ ուսումնասիրութիւնը, այլեւ նորովի գնահատեց նրա կազմի մէջ մտնող երեք առաջնակարգ յուշարձանների գեղարուեստական առանձնայատկութիւնները, լիակատար բացայայտեց դրանց պատկերաբովանդակային էութիւնը:

Քոթանջեանի հետաքրքրութիւնների շրջանակում էր նաեւ Ի. դարի նկարիչների արուեստը: Նա մի շարք յօդուածներով անդրադարձել է Փոլ Կիրակոսեանի, Մարտիրոս Սարեանի, Վլադիմիր Այվազեանի, Վահրամ Գայֆեջեանի, Ղուկաս Զուրարեանի ստեղծագործութիւններին, Հայաստանի Ազգային Պատկերասրահի եւ նրա ստեղծման գործում Ռուբէն Դրամբեանի դերին:

Նա մեզ է կտակել մեծ քանակութեամբ անուարտ գեղանկարչական ու գծանկարչական ստեղծագործութիւններ եւ մի շարք չիրատարակուած, սակայն արդէն տպագրութեան պատրաստ արուեստաբանական աշխատութիւններ, դրանց թում՝ *Վաղ Միջնադարեան Հայաստանի Մոնումենտալ Գեղանկարչութիւնը* եւ *Գոյնը Տաթևի Որմնանկարներում*, աշխատասիրութիւնները, որոնք կը հրատարակուեն առաջիկայում:

Նիկոլայ Քոթանջեանը մահացաւ 2013ի Յունուարի 9ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտ
instart@sci.am



ՄԱՐԶԸՐԻ ԱՆԱՅԻՍ ՅՈՒՍԷՓԵԱՆ ԴՈՔՔԻՆ
(1922-2013)

Ամերիկահայ պատմաբան, արձակագիր Մարջերի Յուսեփեան Դոքքինը ծնունդ է 1922ի Նոյեմբերի 22ին, Նիւ Եորքում, քեսապցի Մովսես եւ զմիտնիացի Մաքրուհի Յուսեփեանների ընտանիքում, մայրական մեծիոր՝ Զմիտնիայում սպանուելուց երկուսուկէս ամիս անց։ Հայրը բժիշկ Մովսես Յուսեփեանը, 1915-1916ին ԱՄՆից մեկնել էր Հայաստան՝ օգնելու գաղթական հայրենակիցներին, աշխատել սովի ու համաճարակի պայմաններում եւ առաքելութիւնն աւարտելուց յետոյ վե-րադարձել ԱՄՆ։ Յետագայում նրա դուստրը յիշել է, որ 1920ականներին իրենց տունը գաղթական էր դարձել ծնողների հետո եւ մօտ ազգա-կանների, ծանօթների եւ անգամ անծանօթների համար։ Այդ մանկութեան յուշերն են, որ յետագայում ատաղձ են դարձել Մարջերի Յուսեփեանի գրական գործերի համար, ինչպէս նաեւ դրդել՝ զբաղուել հայոց եղեռնի պատմութեան ուսումնասիրմամբ։

Մարջերի Յուսեփեանը 1944ին աւարտել է Նիւ Եորքի Քոլումբիա Համալսարանի Բեռնարդ Քոլեջը։ 1957-1993՝ եղել է նոյն քոլեջի գրականութեան եւ անգլերէնի պրոֆեսոր եւ պաշտօնակից-դէկան (1976-1993)։ Արժանացել է Ուիլսոն Քոլեջի պատուոյ դոկտորի կոչման, Խորհրդային Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի կողմից պարգեւատրուել Անանիա Շիրակացու անուան մրցանակով։

Գործունէութիւնը սկսել է որպէս արձակագիր՝ ամերիկեան եւ անգլիագիր հայկական մամուլում հանդէս գալով հայ կեանքից պատմութեանը («Տատիկիս Աղօթագիրքը»)։ 1957ին Նիւ Եորքում Random House Հրատարակչատունը լոյս է ընծայել նրա *A Houseful of Love* վէպը ամերիկահայ կեանքից։ Այն եղել է *Նիւ Եորք Թայմզ*ի ամենից շատ վաճառուող գրքերի ցանկում։ Վէպն ունեցել է միքանի հրատարակութիւն, տպագրուել նաեւ Լոնդոնում (1957), թարգմանաբար լոյս տեսել նորուէգերէն, իտալերէն, գերմաներէն եւ ճապոներէն։

Յուսեփեան Դոքքինի աշխատութիւնները հիմնականում նուիրուած են 1915-1923ին Օսմանեան Կայսրութիւնում Հայոց Ցեղասպանութեանն ու տեղահանութեանը։ Նրա *“The Unremembered Genocide”* յօդուածը (1966, հրատարակուած *Commentary* հանդէտում, նաեւ առանձին գրքով տպագրուել Նիւ Եորքի հրէական յանձնախմբի կողմից) հայոց եղեռնի մասին յետպատերազմեան շրջանում տպագրուած առաջին ընդարձակ ուսումնասիրութիւնն էր ԱՄՆում, որ բարձրացրեց հարցի շուրջ հանրային իրազեկութիւնը եւ խթանեց նոր հետազոտութիւնների ի յայտ գալուն։ Այլ

յօղուածներէից յիշարժան են ամերիկեան գիտական մամուլում լոյս տեսած *Խաղաղութեան Առաջնահերթութիւնը* (1969) եւ *Ի՞նչ Տեղասպանութիւն, Ի՞նչ Ողջակիզում: Լուրեր Թուրքիայից, 1916-1923* (1984) ուսումնասիրութիւնները: Յուսէփեան Դոքքինի հիմնական աշխատութիւնն է *The Smyrna Affair* (1971) պատմաբանասիրական հետազօտութիւնը, որ Լոնդոնում 1972ին լոյս է տեսել *Smyrna 1922. The Destruction of a City* վերնագրով: Այն ունեցել է միքանի հրատարակութիւն (վերջինը՝ 1988ին), թարգմանուել յունարէն (ունեցել է երեք հրատարակութիւն Աթէնքում) եւ թուրքերէն (2012, Ստամբուլ, Բելգէ Հրատ.): Այն նուիրուած է Զմիւռնիայի յոյն եւ հայ բնակչութեան 1922ի ողբերգութեանը՝ գրուած դէպքերի ակա-նատես ու մասնակից հայերի, ամերիկեան դիւանագետների եւ քարոզիչ-ների յուշերի, նամակների ու վկայութիւնների հիման վրայ: «*Տիկին Յուսէփեանը ներկայացնում է ժամանակակից պատմութեան գրեթէ մոռաց-ուած մի ողբերգութեան մանրամասն փաստագրութիւնը: Միայն հիմա, յիսուն տարի անց, գրողը, անտիպ նիւթերի հիման վրայ, օգնում է վերցնել քօղը հրդեհուած Իզմիրի մոլորներէ վրայից: Պարզուում է, որ կեանքի ի-րականութիւնը հնուտ արուեստագետի ձեռքին կարող է իսկապէս աւելի համոզիչ լինել, քան գրական հմտութիւնը*», գրել է *New York Times Book Review*-ն: Իսկ Լոնդոնի *Օբզըրվըր*ն աշխատութիւնն անուանել է «*մեծ կշիռ ու հեղինակութիւն ունեցող ցնցող փաստաթուղթ*»: Յուսէփեան Դոքքինը կազմել եւ հրատարակել է *The Making of a Feminist: Early Journals and Letters of M. Carey Thomas* (1977) հատորը, նաեւ հեղինակել *George Horton and Mark L. Bristol: Opposing Forces in U.S. Foreign Policy, 1919-1923* (1983) աշխատութիւնը եւ *Inside Out* վէպը (1989, համահեղինակ՝ Ժան Վ. Քուլէն):

Երկար տարիներ եղել է Նիւ Եորքի *Ararat* գրական քառամսեայի խմբագրական մարմնի եւ Քոլումբիայի Հայ Կենտրոնի Անահիտ գրական մրցանակաբաշխութեան յանձնաժողովի անդամ: Կարելոր դեր է խաղա-ցել Քոլումբիա Համալսարանում մշտական հայագիտական ամբիոնի հիմնման գործում: Տասնամեակներ շարունակ ԱՄՆում եւ այլուր հանդէս է եկել դասախօսութիւններով, հիմնականում՝ Հայոց Տեղասպանութեան եւ թուրք կառավարութեան ժխտման հոգեբանութեան վերաբերեալ:

1956ին Յուսէփեան Դոքքինն այցելել է Խորհրդային Հայաստան լինե-լով հայրենիք այցելած առաջին ամերիկահայ գրողներից մէկը: Երկրորդ անգամ նա Հայաստանում եղել է 1976ին՝ Սփիւրքահայութեան Հետ Մշա-կութային Կապի Կոմիտէի հրաւերով:

Մարջորի Յուսէփեան Դոքքինը կեանքից հեռացաւ 2013ի Փետրուարի 8ին, Նիւ Եորքում:

ԱՐՄՈՒՒԻ ԲԱՆԶԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com



ԲԱԲԿԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(1941-2013)

Հայ պատմագիտական ու աշխարհագրական միտքն ու բարձրագույն դպրոցը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: 72 տարեկան հասակում կեանքից հեռացաւ նշանաւոր հայագէտ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտութեան վաստակաւոր գործիչ, Երեւանի Պետական Համալսարանի Հայոց Պատմութեան Ամբիոնի վարիչ Բաբկէն Յարութիւնեանը:

Յարութիւնեանը ծնուել է 1941 Մարտի 4ին Երեւանում: 1958ին ոսկէ մեդալով աւարտել է Հրաչեայ Աճառեանի Անուան դպրոցը: Նոյն թուականին ընդունուել է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետը, որը ժամկէտից մէկ տարի շուտ (1962) աւարտել է գերազանցութեան դիպլոմով: 1977ին, դարձեալ գերազանցութեան դիպլոմով աւարտել է նաեւ ԵՊՀ Իրաւագիտութեան Ֆակուլտետը: 1963-1966՝ սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում եւ պատրաստել թեկնածուականատենախօսութիւն՝ «Վայոց Ձոր (Պատմա-Աշխարհագրական ուսումնասիրութիւն)» նիւթով, որը յաջողութեամբ պաշտպանել է 1968ին: 1993ին «Մեծ Հայքի Վարչաքաղաքական Բաժանման Համակարգն Ըստ «Աշխարհացոյց»-ի» նիւթով պաշտպանել է դոկտորականատենախօսութիւն:

Լայն ու բազմակողմանի էին Յարութիւնեանի հետաքրքրութիւնների շրջանակները, որոնց հիմքում խարսխուած էին նրա պատմա-աշխարհագրական խոր գիտելիքները, աղբիւրագիտական ու լեզուագիտական բարձր պատրաստութիւնը, հետազօտական ու վերլուծական անուրանալի ձիրքերը: Նա հեղինակ է շուրջ 500 աշխատութիւնների (մենագրութիւններ, յօդուածներ, քարտեզներ), որոնք առաւելապէս նուիրուած են հին եւ միջնադարեան Հայաստանի պատմութեանն ու պատմական աշխարհագրութեան տարաբնոյթ հիմնահարցերին:

Հայագիտութեան բնագաւառում լուրջ ներդրումներ են Յարութիւնեանի *Աշխարհացոյցը Եւ Ձորս Հայքերի Խնդիրը* (1997), *Հայաստանի, Հայ-Իրանական Յարաբերութիւնների Եւ Առաջաւոր Ասիայի Հնագոյն Պատմութեան Մի Քանի Խնդիրների Շուրջ* (1998), *Մեծ Հայքի Վարչաքաղաքական Բաժանման Համակարգն Ըստ «Աշխարհացոյց»-ի», Գիրք 1*, (2001) մենագրութիւնները եւ այլ ուսումնասիրութիւնները: Աշխարհագրագէտի բացառիկ ունակութիւններն ու կարողութիւնները նրա մէջ դրսեւորուել են

առանձնապես հին Հայաստանի պատմական աշխարհագրությունը նուիրում այնպիսի եզակի յուշարձանի ուսումնասիրության գործում, ինչպիսին է *Աշխարհացոյց*: Բազմակողմանի, մանրակրկիտ քննության շնորհիվ պատմաբանը պարզել է, որ մատենագրական այս երկը Ե. դարի գրական յուշարձան է, իսկ դրա հեղինակը Մովսես Խորենացին է: Յարութիւնեանն առանձին ուսումնասիրություններով ճշգրտել է Տիգրանակերտի տեղագրությունը, Մեծ Հայքի վարչատարածքային բաժանման համակարգը, Խորենացու չորրորդ գրքի առեղծուածը, հայոց գրերի գիտի թուականը եւ.:

Պատմագիտական ու քաղաքական անուրանալի արժէք ունի Յարութիւնեանի հեղինակութեամբ լոյս տեսած *Հայաստանի Պատմութեան Ատլաս* եռահատորը (Երեւան, 2003, 2008, 2012): Այն պատմագիտական իւրօրինակ համայնապատկեր է, որն իր ընդգրկումով ու բովանդակութեամբ նախօրինակը չունի եւ հազուադէպ երեւոյթ է նաեւ համաշխարհային քարտեզագրութեան ասպարէզում: Միայն եւրոպական միքանի ժողովուրդներ ունեն նման ատլասներ: Յարութիւնեանը հեղինակ է կոթողային այնպիսի հրատարակութիւնների, ինչպիսիք են *Հայաստանի Ազգային Ատլասի* 2րդ հատորը (2008), հեղինակակիցը՝ *Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն* եռալեզու ատլասի (2009), ինչպէս նաեւ շուրջ 300ից ատէլի ուսումնական, գիտական եւ այլ բնոյթի պատմական քարտեզներ:

Նշանակալից է նաեւ Յարութիւնեանի ներդրումը Արցախի հիմնահարցի ուսումնասիրութեան բնագաւառում՝ եւ գիտական, եւ գործնական առումներով: Նրա գիտական, հասարակական գործունէութեան մէջ լայն տեղ է գրաւել աղբբեջանական եւ թուրքական պատմագրութիւններում անընդմէջ դրսեւորուող հակահայկական հայեցակարգերի հերքումը: Այս կապակցութեամբ նա հանդէս է եկել գիտական ու հրապարակախօսական բնոյթի տասնեակ յօդուածներով, որոնցից շատերը տպագրուել են նաեւ արտասահմանեան պարբերականներում:

Յարութիւնեանը գործուն մասնակցութիւն է ունեցել *Հայ Ժողովրդի Պատմութիւն* ակադէմիական ութհատորեակի եւ ներկայումս իրականացուող քառահատորեակի, դպրոցական ու բուհական բազմաթիւ դասագրքերի, ձեռնարկների, *Հայկական Մովսէսական Հանրագիտարան*, *Հայկական Համառօտ Հանրագիտարան*, *Հայկական Հարց* եւ այլ հանրագիտարանների ու տեղեկատուական բնոյթի գրքերի ստեղծման աշխատանքներին: Նա եղել է մի շարք գիտական խորհուրդների անդամ եւ նախագահ: Գիտական զեկուցումներով հանդէս է եկել հանրապետական ու միջազգային բազմաթիւ գիտաժողովներում (Երեւան, Բեռլին, Միւնխեն, Բոխում, Վիեննա,

Բուդապեշտ, Պրագա, Փարիզ, Մոսկվեի, Թբիլիսի, Մոսկուա, Ս. Պետերբուրգ, Նիւ Եորք, Լոս Անջելես, Բոստոն, Թեհրան եւ այլուր)։

Յարութիւնեանը գիտական աշխատանքը յաջողութեամբ զուգակցել է մանկավարժական գործունէութեանը։ 1969ից մինչեւ կեանքի վերջին օրերը եւս դասաւանդում էր ԵՊՀում։ 1993-1994՝ դասախօսել է Համազգայինի Բէյրութի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկում, իսկ 1995-1996՝ ԱՄՆ Միչիգանի Դիքսոն Համալսարանում։ 1970-1971՝ եղել է ԵՊՀ արտասահմանեան ուսանողների աշխատանքների գծով ղեկան, 1985-1988՝ ԵՊՀ Հրատարակչութեան տնօրէն, 1988-2013՝ Հայաստանի Պատմական Աշխարհագրութեան Ու Քարտեզագրութեան Լաբորատորիայի գիտական ղեկավար, 1993-2004՝ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետի ղեկան, 1997-2000՝ համատեղութեամբ՝ ԵՊՀ Հայաստանի Յարակից Երկրների Պատմութեան Ամբիոնի վարիչ, 2004-2013՝ Հայոց Պատմութեան Ամբիոնի վարիչ, 2007-2008՝ համատեղութեամբ վարել է եւս ԶՀԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտօնը։

Յարութիւնեանը շօշափելի աւանդ ունի եւս գիտական մասնագետներ պատրաստելու գործում. բազմիցս եղել է թեկնածուական եւ դոկտորական ատենախօսութիւնների ընդդիմախօս, խորհրդատու, ղեկավար։ Այսօր հանրապետութիւնում ու նրա սահմաններից դուրս գործող շատ ու շատ պատմաբաններ իրենց ուսանողական, ասպիրանտական ու գիտական մկրտութիւն ստացել են նրա շիտակ, բարեխիղճ ու անկողմնակալ հոգատարութեան ներքոյ։

Երկարատեւ, անբասիր ու շնորհակալ գործունէութեան համար եւս արժանացել է ԵՊՀ ոսկէ մեդալի։ 2006ին նրան շնորհուել է Մովսէս Խորենացու մեդալ, 2009ին՝ ՀՀ Գիտութեան Վաստակավոր Գործչի կոչում։ Հայագետի միջազգային ճանաչման վկայութիւններից են Ֆրանսիայի Արտաքին Գործոց Լախարարութեան ու Ֆուլբրայթի Հիմնադրամի թոշակներին արժանանալը, Բնութեան եւ Հասարակութեան Մասին Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի եւ «Արարատ» Ակադեմիայի անդամ ընտրուելը, Լոբելեան մրցանակակիր Ալբերտ Շուայցըրի ոսկէ մեդալի, «Ոսկէ Արծիւ Ոսկէ Թագով» գերմանական եւ «Եկատերինա Մեծ» ռուսական շքանշաններին, Մոսկվեի Դոլ-Վալերի Համալսարանի մեդալի արժանանալը։

Իր աշխատասիրութեամբ, սկզբունքայնութեամբ, վարակիչ անմիջականութեամբ ու կեցումքով, հայրենիքի ու ժողովրդի հանդէպ անմեացորդ սիրով Յարութիւնեանը յաճախ էր գրաւում շրջապատի ուշադրութիւնը։ Եւս հասարակականօրէն չարիքանց գործունէայ անհատ էր։ Անհաշտ ու անսթղ սկզբունքայնութիւն էր դրսեւորում հանրապետութեան կեանքում տեղ գտած թերութիւնների նկատմամբ, եւ պատահական չէ, որ գործուն մասնակցութիւն էր ցուցաբերում

հանրապետության հասարակական կեանքին. եղել է ՀՀ նախագահին կից Հասարակական Խորհրդի անդամ:

Յարութիւնեանը դեռ լի էր ստեղծագործական կարելիութիւններով, սակայն, նրա շատ մտադաշտումներ, ցաւօք, չիրականացան: 2012 Հոկտեմբերի 10-13ին արդէն հիւանդ վիճակում, նա կազմակերպեց Անանիա Շիրակացուն նուիրուած միջազգային գիտական նստաշրջանի աշխատանքները, որը կլանեց նրա ամբողջ ներուժը: Իսկ ընդամենը չորս ամիս անց՝ 2013ի Փետրուարի 25ին նա իր մահկանացուն կնքեց Երեւանում՝ թողնելով նշանաւոր գիտնականի, գիտութեան անխոնջ կազմակերպչի, ուսուցչի ու քաղաքացու անբասիր անուն:

ՊԵՏՐՈՍ Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՌՈՒԲԷՆ ՀԵՆՐԻԿԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

(1962–2013)

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Նոր Պատմութեան Բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտութիւնների թեկնածու, առաջին դասի խորհրդական, ՀՅԴ անդամ Ռուբեն Գասպարեանը ծնունդ է 1962 Յունիսի 26ին, Երեւանում, մտաւորականի ընտանիքում: 1979ին ավարտելով Երեւանի Չարենցի անուան թիւ 67 միջնակարգ դպրոցը՝ ընդունւում է Խ. Աբովեանի Անուան Պետական Մանկավարժական Ինստիտուտի Պատմա-աշխարհագրական Ֆակուլտետի Պատմութեան եւ Մանկավարժութեան Բաժնի, որն ավարտում է գերազանցութեամբ 1984ին, ստանալով պատմութեան եւ հասարակագիտութեան ուսուցչի, դաստիարակչական աշխատանքների մեթոդիստի որակաւորում: 1984-1989՝ աշխատել է Աբովեանի շրջանի (այժմ Կոտայքի Մարզ) Ակունք գիւղի միջնակարգ դպրոցում որպէս պատմութեան ուսուցիչ: Նոյն թուականին ընդունուել է Հայաստանի ԳԱ Պատմութեան Ինստիտուտի ասպիրանտուրան (հեռակալ):

1989-1996՝ դասաւանդել է Երեւանի թիւ 57 միջնակարգ դպրոցում որպէս պատմութեան եւ հասարակագիտութեան ուսուցիչ: 1991ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն «Գիլիկիայի Հայութեան Սոցիալ-Քաղաքական Կեանքը 1900-1921 թթ.» թեմայով եւ շնորհուել է պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան: Նոյն թուականին աշխատանքի է ընդունուել ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Նոր Պատմութեան Բաժնի որպէս գիտաշխատող, 1991-1997՝ վարել է նոյն հաստատութեան Երիտասարդ Գիշախատողների Խորհուրդը, իսկ 1995-1999՝ նոյն հաստատութեան գիտական քարտուղարի պաշտօնը:

1999-2009՝ վարել է ՀՀ Կրթության և Գիտության Նախարարության Բարձրագույն Կրթության, ապա Նախարարության աշխատակազմի Բարձրագույն Մասնագիտական Կրթության, Նախարարության աշխատակազմի Բարձրագույն և Ցետրուհական Կրթության Վարչության պետի պաշտոնը: Համատեղության կարգով դասաւանդել Երևանի Պետական Համալսարանի մագիստրատուրայում: 2009ին կրկին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտի Նոր Պատմության Բաժին, իսկ 2010 Յուլիսի 1ից մինչև 2011 Յունիս ղեկավարել է ինստիտուտի Հայկական Հարցի և Հայոց Ցեղասպանության Պատմության բաժինը: Նոյն ամսից տեղափոխուել է Նոր Պատմության Բաժին, որտեղ աշխատել է մինչև իր մահը:

1999ին հրատարակում է Ռուբեն Գասպարեանի մենագրությունը՝ *Կիլիկիահայությունը 20-րդ Դարի Սկզբին* (1999): 1909ին Կիլիկիայի հայության կոտորածի մասին գրուել են բազմաթիւ ուսումնասիրություններ, հրատարակուել են հայ և օտար ականատեսների և պատմաբանների վկայություններ ու հետազոտություններ: Եւ թում էր, թէ հնարաւոր չէ որեւէ նոր փաստ կամ այլ բաց թողնուած իրադարձութիւն կամ դէպք վկայակոչել: Ի պատիւ Ռուբեն Գասպարեանի, հարկ ենք համարում ընդգծել, որ հեղինակը կարողացել է ի մի բերել առկայ պատմագիտական գրականութիւնը և արխիւային փաստերը ու եզրակացրել, որ կոտորածները կազմակերպել է այսպէս կոչուած հին՝ աբղուլիամիդեան և նոր՝ երիտ-թուրքական կառավարութիւնը: Գասպարեանն խորութեամբ ու հմտութեամբ վերլուծում է Աղանայի, Դեթթ-Շուլի, Սսի, Շէլի-Մուրադի (Շարդէր), Բաղշէի, Հաճընի, Մարաշի և այլ վայրերի հայության գոյամարտերը: Գասպարեանը համադրելով արխիւային վաւերագրերը, ականատեսների յուշերը, պատմագիտական ուսումնասիրությունները, որոնց գնահատականներով զոհերի թիւը տատանում է 25ից 30 հազարի, քննում է Կիլիկիայի հայութեանը հասցուած վնասը: Այն հաշուարկելու համար օգտագործել է ինչպէս հրատարակուած, այնպէս էլ արխիւային տեղեկութիւնները: Վկայակոչուած փաստերը բերում են այն եզրակացութեան, որ օսմանեան իշխանութիւնների կազմակերպած հայերի զանգուածային ջարդերն ունեցել են քաղաքական ու տնտեսական դրդապատճառներ:

2005ին հրատարակուեց Գասպարեանի նոր աշխատութիւնը՝ *Հայկական Կոտորածները Կիլիկիայում (XIX Դարի 90-ական թթ.-1921 թ.)*: Աշխատութեան նախաբանում հեղինակը նշել է, որ պատմաբանների կողմից գրուել են մեծածաւալ ու ծանրակշիռ աշխատութիւններ, «սակայն կիլիկիահայութեան կոտորածների, ազատագրական շարժումների, պաշտպանական մարտերի և մաքառումների վերաբերեալ չկայ մի ամբողջական աշխատութիւն, ուսումնասիրութիւն, որտեղ քննարկուէին

վերոնշյալ հիմնախնդիրները՝ որպես մեկ ամբողջության բաղկացուցիչ մասեր»։ Ահա հայ պատմագրության մեջ եղած բացը գալիս է լրացնելու Գասպարեանի ուսումնասիրությունը։ Պատմաբանի հետազոտությունն ընդգրկում է 1909ից մինչև 1921։ Որպես օմանեան քաղաքականության դրսևորման շարունակություն՝ նա, ինչպես ինքն է նշում, հպանցիկ անդրադարձել կիլիկիահայության 1890ականներին տեղի ունեցած կոտորածներին, եւ Կիլիկիայում ծաւալուած իրադարձութիւնների լուսաբանմանը՝ մի շարք օտար հեղինակների եւ պատմաբանների կողմից։

Գասպարեանը մասնակցել է նաեւ հայ ժողովրդի պատմության եւ հայ եկեղեցու պատմության դպրոցական դասագրքերի ստեղծմանը, յօդուածներով հայ գիտական եւ պարբերական մամուլին, հանդէս եկել զեկուցումներով գիտաժողովներում։

Կեանքի վերջին տարիներին Գասպարեանը Ռուբէն Սահակեանի հետ միասին աշխատում էր Ա-Դոյի (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան) անտիպ գործերի եւ վանեցի Եղիշէ Բուրանեանի անտիպ յուշերի հրատարակութեան վրայ։ Ցաւօք երկու գործերն էլ լոյս տեսան նրա մահից յետոյ (տե՛ս՝ Ա-Դօ, *Ռուսական Ցարերը Եւ Հայկական Հարցը*. առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Ռուբէն Գասպարեանի եւ Ռուբէն Սահակեանի, 2013. Եղիշէ Բուրանեան, *Իմ Անցեալի Յուշերից. Վասպուրականի Ողբերգութիւն*, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ռուբէն Գասպարեանի եւ Ռուբէն Սահակեանի, 2013)։ Ռուբէն Գասպարեանը եւ Ռուբէն Սահակեանը աշխատանքներ էին սկսել հայ ազատագրական շարժման գործիչ, Ա-Դոյի կրտսեր եղբայր, ՀՅԴ անդամ, Բանկ Օտոմանի գործողութեանը մասնակցած Միքայէլ Տէր-Մարտիրոսեանի (Մար) անտիպ յուշերը հրատարակելու համար, սակայն Գասպարեանի մահը հնարաւորութիւն չտուեց աւարտել աշխատանքը։

Ռուբէն Գասպարեանը, չնայած ծանր հիւանդութեանը, աշխատում էր դոկտորական ատենախօսութեան վրայ, որը, ցաւօք, նոյնպէս մնաց կիսատ։ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտը նախատեսում է այն հրատարակել 2015ին։

Ռուբէն Գասպարեանը մահացաւ 2013ի Յունիսի 10ին, Երեւանում։

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԷՐԻԿ ԱՐՏԵՄԻ ՉՈՂՐԱԲԵԱՆ
(1939-2013)

74 տարեկան հասակում կեանքին հրաժեշտ տուեց Երևանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) երկարամեայ դասախօս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1988) Էդիկ Չոհրաբեանը։ Նա ծնունդ է 1939ին Կապանի շրջանի Բաղաբուրջ գիւղում, ուր ստացել է իր նախնական կրթությունը։ Ուսումնառությունը շարունակել է Երևանի Լեոնամետալուրգիական Տեխնիկումում, այնուհետև՝ ԵՊՀի Պատմության Ֆակուլտետում (1962-1967)։ 1967-1969՝ ԵՊՀի ասպիրանտուրայում ուսանելուց յետոյ իբրեւ դասախօս աշխատանքի է անցել նոյն հաստատությունում՝ նախ Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության (1969-1988), այնուհետև Բաղաբեանի Պատմության (1988-1993) ամբիոններում։ Յետխորհրդային ժամանակաշրջանում Չոհրաբեանը տեղափոխուել է ԵՊՀ նորաստեղծ՝ Միջազգային Ցարաբերությունների Ֆակուլտետ, ուր շարունակել է իր մանկավարժական գործունեությունը։ 1993-2000՝ եղել է Միջազգային Ցարաբերությունների Տեսության Եւ Պատմության Ամբիոնի վարիչ, 1998-2008՝ այդ ֆակուլտետի դեկան, իսկ 2008ից մինչեւ մահ՝ Միջազգային Ցարաբերությունների Եւ Դիւանագիտության Ամբիոնի վարիչ։

ԵՊՀում մանկավարժական գործունեության ընթացքում Չոհրաբեանը Պատմության եւ այլ ֆակուլտետներում նախ վարել է տարբեր սեմինար պարապմունքներ, այդ թւում յարակից բաժնի՝ իմ համակուրսեցիների համար, այնուհետև դասաւանդել խիստ կարեւոր եւ այժմեական հնչեղութիւն ունեցող առարկաներ, ինչպէս՝ *Հայ Դիւանագիտությունը Նոր Եւ Նորագոյն Ժամանակներում, Հայկական Հարցը Եւ Միջազգային Դիւանագիտությունը, Ղարաբաղեան Հիմնահարցը Եւ Միջազգային Դիւանագիտությունը* նեղ մասնագիտական դասընթացները։

Լինելով գիտության կազմակերպիչ, նա պարբերաբար ղեկավարել է պատմական գիտության անդաստանում առաջին քայլերն անող երիտասարդ գիտաշխատողների աշխատանքները, որոնք նրա հոգատար ղեկավարության ներքոյ յաջողութեամբ պաշտպանում էին թեկնածուական ատենախօսություններ։ Վերջին տարիներին թեկնածուական ատենախօսությունների թեմաների ընտրության հարցում նա նախապատուութիւնն իրաւամբ տալիս էր արդի փուլում

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուսումնասիրության կարեւորութեանը:

Չնայած դասախօսական ծանրաբեռնուածութեանը եւ յաւուր պատշաճի վարչական պարտականութիւնների կատարմանը, Ձոհրաբեանը միաժամանակ ծաւալել է բեղուն գիտական գործունէութիւն եւ աչքի ընկել իբրեւ հայ ժողովրդի Ի. դարի պատմութեան նուիրեալ: 1973ին նա ստացել է պատմական գիտութիւնների թեկնածուի, իսկ 1987ին՝ դոկտորի գիտական աստիճաններ: Նրա գրչին են պատկանում մեծաթիւ գիտական աշխատութիւններ, որոնց թում՝ *Սովետական Ռուսաստանը Եւ Հայ-Թուրքական Յարաբերութիւնները, 1920-1922 թթ.* (1979), *Սովետական Ռուսաստանը Եւ Հայ-Իրանական Յարաբերութիւնները (1920-1922 թթ.)* (1985), *Եւրոպական Երկրների Հետ Սովետական Հայաստանի Անկտրատնտեսական Անկշտութիւնների Պատմութիւնից (1920-1922 թթ.)* (1987), *1920 թ. Թուրք-Հայկական Պատերազմը Եւ Տէրութիւնները* (1997), *Ազգամիջեան Կոիւները Երեւանի Նահանգում 1918 թ.* (2000), *Նախիջեւանեան Հիմնահարցը Եւ Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. Դեկտ.-1920 թ. Ապրիլ)* (2002), *Նախիջեւանեան Հիմնահարցը. 1920 թ. Մայիս-1921 թ. Հոկտեմբեր* (2010), *Sharur-Nakhijevan V 1918-1919 GG. (Istoria Genotsida Nakhijevanskikh Armian)*՝ (Շարուր-Նախիջեւանը 1918-1919 թթ. (Նախիջեւանահայերի Ցեղասպանութեան պատմութիւն) (2012) մենագրութիւնները:

Ձոհրաբեանի մենագրութիւնների սոսկ վերնագրերն ակնյայտ են դարձնում, որ նա ի սկզբանէ ուշադրութիւնը կենտրոնացրել է 1910-1920ականներին հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձութիւնների պատմութեան առեջքների վերհանման վրայ՝ միջազգային յարաբերութիւնների հոլովոյթում: Ի դէպ, խորհրդային իշխանութեան տարիներին պատմական այդ ժամանակաշրջանի ուսումնասիրութիւնը, մասնաւորապէս հանգուցեալի նախընտրած հարթութեան վրայ, չէր կարող պատմաբանի համար մեծ բարդութիւններ չարուցել: Յետխորհրդային ժամանակաշրջանում նշուած թեմաների ուսումնասիրութեան համար ի վերջոյ ի յայտ եկան բարենպաստ պայմաններ, որոնք նրան հնարաւորութիւն ընձեռեցին ձեռնամուխ լինելու տարբեր կնճռոտ հիմնախնդիրների անաչառ եւ առաւել հիմնաւոր հետազոտութեանը:

Գերադասում եմ ուշադրութիւնը բեւեռել նախիջեւանեան հիմնահարցին նուիրուած Ձոհրաբեանի մենագրութիւնների վրայ, որի գիտական ուսումնասիրութեանն անդրադառնալը խորհրդային Միութիւնում հնարաւոր չէր: Իր գրքերում նա մանրակրկիտ վերլուծել է Նախիջեւանի հիմնահարցի շուրջ ծագած տարատեսակ քննարկումները՝

մասնատրապես խորհրդա-թուրքական յարաբերությունների ենթախորքում եւ ըստ Մոսկուայի ու Կարսի 1921ի պայմանագրերի բացայայտել խորհրդային Ռուսաստանի խիստ բացասական դերը հայ ժողովրդին պատկանող այդ տարածքն Ադրբեջանին յանձնելու հարցում:

Հաշուի առնելով մանկավարժական եւ գիտահետազոտական ասպարեզներում Ջոհրաբեանի բեղմնավոր գործունեությունը, ՀՀ կառավարությունը նրան պարգևատրել է Մովսես Խորենացու մեդալով: Նրա մահը ծանր կորուստ էր ԵՊՀ դասախօսական կազմի եւ ուսանողութեան համար, որոնց խորին յարգանքը նա վայելում էր:

Ջոհրաբեանը վախճանուել է 21 Յունիս 2013ին Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

varuzhan.poghosyan@yahoo.com

ԱԼՄԱՍՏ ԳՐԻԳՈՐԻ ԶԱՔԱՐԵԱՆ

(1923-2013)

Կեանքի 90րդ տարում իր մահկանացուն կնքեց Գրողների Միության Անդամ (1973), գրականագետ, գրաքննադատ, բնագրագետ, գրականութեան պատմաբան, բանասիրական գիտությունների դոկտոր Ալմաստ Զաքարեանը: Նրա գիտական կենսագրությունը համընկնում էր ԳԱԱ համակարգում Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի կազմաւորման հետ, որին անմնացորդ նուիրում էր մինչեւ կեանքի վերջը:

Զաքարեանը ծնուել է 1923 Յունուարի 22ին Նախիջեւանի ԻԽՍՀ Օրդուբադի շրջանի (վաղնջական Գողթն-Գողթան գաւառի) Փառակա գիւղում, հողագործ գիւղացու ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գիւղի եօթնամեայ դպրոցում, ապա 1937ից այն շարունակել Երեւանի Մանկավարժական Ուսումնարանում: Այսպէս կոչուած՝ սպիտակ ֆինների դէմ մղուած պատերազմի օրերին՝ 1939ին, աշխատակոչուել էւ որպէս ուսուցիչ աշխատել է Բասարգեչարի (Կարդենիսի) շրջանի Կարմիր Վանք գիւղում: 1940ին ընդունուել էւ 1944ին գերազանցութեամբ աւարտել է Երեւանի Պետական Մանկավարժական Ինստիտուտի Հայոց Լեզուի Եւ Գրականութեան Ֆակուլտետը:

Յունուար 1945ին աշխատանքի է անցել Գրականութեան Ինստիտուտում, որտեղ եւ աշխատել է որպէս առաջատար գիտաշխատող:

1951ին «Սուրեն Սպանդարեանը Եւ Գրականութեան Հարցերը» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն եւ ստացել բանասիրութեան թեկնածուի աստիճան: 1976ին «XX Դարի Սկզբի Հայոց

Բանաստեղծությունը» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախօսություն եւ արժանացել բանասիրութեան դոկտորի աստիճանի:

Լայն ու տարողունակ է եղել Ջաքարեանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ խորհրդահայ գրականութեան պատմութեան ու գրական քննադատութեան ակունքներից մինչեւ ժամանակակից գրականութեան տեսութեան հարցերը, Ի. դարասկզբի հայ գեղարուեստական գրականութեան զարգացման ընթացքից մինչեւ Դերենիկ Դեմիրճեանի, Ակսել Բակունցի, Եղիշէ Չարենցի, նորագոյն շրջանի հայ բանաստեղծների ու արձակագիրների ժառանգութեան քննությունը: Այս հարցերին նա նուիրել է հարիւրաւոր յօդուածներ, հրապարակումներ, գրախօսություններ, գրքեր: Այսպէս, *Սովետահայ Գրականութեան Պրոբլէմները*. *Գրական-Բանասիրական Հետազոտություններ* երկրորդ գրքի երկրորդ բաժինը՝ «Սովետահայ Գրականութեան Ժամանակագրություն (1920-1947)» վերտառութեամբ ստուար մասով պատկանում է նրա գրչին (կազմողներ՝ Ջաքարեան, Յովհաննէս Ղազարեան, ընդհանուր ղեկավարութեամբ Էդուարդ Թովչեանի, 1948, էջ 249-637): Սրան յաջորդեցին *Սուրէն Սպանդարեանը Եւ Գրականութեան Հարցերը* (1956), ապա *Սովետահայ Գրականութեան Տարեգրություն (1917-1956)* (հեղինակակիցներ՝ Յովհաննէս Ղազարեան, Սարիբէկ Մանուկեան, 1957), *Սովետահայ Գրականութեան Անցած Ուղին* (1957) գրքերը:

Անգնահատելի է Ջաքարեանի վաստակը յատկապէս չարենցագիտութեան ասպարեզում. նա է իրականացրել մեծ բանաստեղծի գրական ժառանգութեան ամբողջական եւ գիտական առաջին հրատարակությունը՝ հարուստ ծանօթագրություններով ու բնագրային տարբերություններով: Չարենցի երկերի վեցհատորեայ ակադեմիական այս հրատարակությունը (Երևան, 1962-1968), իրաւամբ, հաւաքական մի խմբի գործ էր, բայց նա դա կատարեց միայնակ՝ դրանով իսկ դնելով չարենցագիտութեան հիմնաքարերը, որոնք էլ ուղենիշ դարձան չարենցագետների համար: Ջաքարեանը անտիպ սեւագրությունների վրայ երկարատեւ աշխատել ու հրատարակութեան է պատրաստել նաեւ *Անտիպ Եւ Չհաւաքուած Երկերում* (բնագիրը պատրաստել եւ ծանօթագրել է Անահիտ Չարենցը, 1983) գետեղուած Չարենցի չափածոյ էջերը (չնչին բացառութեամբ): Այդ մասին ահա թէ ինչ է գրուած ժողովածուի «խմբագրութեան Կողմից» առաջաբանում՝ «Այնպէս Ջաքարեանը խմբագրել է մասնաւորապէս Չարենցի չափածոյ անտիպ ժառանգությունը՝ աշխատելով Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում պահպանուող բանաստեղծի ձեռագրերի վրայ» (էջ 8):

1973ից Գրողների Միության անդամ Զաքարեանը այդ տարիներին հրատարակեց *XX Դարի Սկզբի Հայոց Բանաստեղծությունը (Ակունքները Եւ Զարգացման Ուղիները) Գիրք 1 (1973) եւ XX Դարի Սկզբի Հայոց Բանաստեղծությունը (Ակունքները Եւ Զարգացման Ուղիները). Քնարերգություն Գիրք 2 (1977)* երկհատորեակը: Աշխատության մեջ քննույմ են Բ. դարասկզբի հայ բանաստեղծության զարգացման ընթացքը, գեղարուեստական առանձնայատկությունները, ցոյց է տրույմ, թէ դարամուտի պտեզիան, մասնաւորապէս Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի, Միսաք Մեծարեանցի, Վահան Տէրեանի ստեղծագործությունները ի՛նչ առնչություններ ունեն հայ տոհմիկ աւանդների եւ համաշխարհային գեղարուեստական մտայնությունների հետ, միաժամանակ բնութագրույմ են նրանց որակական նոր կուտակումները. պտեզիայի առանձնայատկությունների քննութեան ընթացքույմ վերլուծութեան նիւթ են ծառայույմ բանաստեղծական առաւել բնորոշ երեւոյթներ: Այս կոթողական ուսումնասիրութեան մեջ Զաքարեանը հանդէս է բերել գիտական վերլուծությունների ներհուն ուժ, գեղարուեստի նուրբ զգացողութիւն, միայն իրեն յատուկ գրելաոճ: Արժէքաւորելույ աշխատութեան Ա. գիրքը՝ անուանի բանագետ-հայագետ Սարգիս Յարութիւնեանը մասնաւորապէս գրել է. «... քննարկուող մենագրութեան մեծագոյն գիտական նուաճումն այն է, որ պատմա-տիպաբանական եւ համեմատական մեթոդների գուզակցուած քննություններույ բացայայտույմ են հայ նոր բանաստեղծութեան ժառանգական բնիկ աւանդոյթները, դրանց բուն ազգային-ժողովրդական ակունքներն ու կենսական երակները: ... հայ բանաստեղծութեան աւանդների ծագման ու ժառանգական փոխակերպումների առաջին լուրջ եւ յաջողուած փորձը լինելույ, միաժամանակ եւ նոր խօսք է ու գիտական կարեւոր, շատ կողմերից ուսանելի ներդրույմ՝ արդի հայ գրականագիտութեան մէջ» (Սովետական Գրականութիւն, 1974, 3, էջ 117-118):

Զաքարեանի գրիչը բեղմնաւոր էր, մշտապէս ներկայանույմ էր իւրայատուկ ասելիքույ՝ խոհերույ, հարցադրումներույ եւ անսպասելի լուծումներույ: Դրա խօսուն վկայութիւններից են *Աւանդների Ուժը* (1981), *Գրական Արձագանգներ Եւ Յուշեր* (1985), *Գրականութեան Եւ Պատմութեան Ընթացքները* (1989) ժողովածուներույմ ընդգրկուած նիւթերը: Դրանցույմ մասնաւորապէս Զարեանցի, Դեմիրճեանի, Բակունցի, Պարոյր Մեալիի ստեղծագործութեան նիւթերույ, նրանց կեանքի ու գործունէութեան հանգամանքներույ շօշափույմ են խորհրդահայ գրականութեան պատմութեան եւ տեսութեան հարցեր, շեշտույմ է խորհրդահայ դասական աւանդների դերը գրականութեան զարգացման տեսանկիւնից, արծարծույմ են արդի գրականագիտութեան ու

քննադատության խնդիրներ: Այդ ժողովածուներում գետեղուած են նաեւ հեղինակի յուշերը գրականութեան ու արուեստի անուանի գործիչների (Մարտիրոս Սարեան եւ Սարեաններ, Իսահակեան, Սեւակ) մասին:

Եւս մէկ արժէքաւոր հրատարակութիւն է *Ազատասիրական Գաղափարները Հայ Հրապարակախօսութեան Մէջ (1820-1920 թթ.)* (բնագիրը, առջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Գարրի Յովհաննիսեանի հեղինակակցութեամբ) մեծածաւալ ժողովածուն (1982): Դրանում ամփոփուած են Մեսրոպ Թաղիաղեանից՝ մինչեւ Չարենց հայ գրողների, հրապարակախօսների, հասարակական-քաղաքական գործիչների ժառանգութիւնից քաղուած ազատասիրական գաղափարներով տոգորուած էջեր:

Պատկերաւոր ասած՝ Զաքարեանի կեանքի գիրքը, այնուամենայնիւ, նրա հեղինակած Չարենցի գիտական կենսագրութիւնն է՝ *Եղիշէ Չարենց. Կեանքը, Գործը, Ժամանակը*: Ընթերցողի սեղանին են դրուած մենագրութեան երեք հատորները (1997, 2003, 2008): Դրանցում բազմաթիւ ու բազմալիսի փաստական-յուշագրական վկայակոչումներով եւ բանաստեղծական վիթխարի վաստակի վերլուծութեամբ քննականօրէն ներկայացուում է Չարենցի կեանքը, գործն ու ժամանակը՝ ներառեալ 1927 թուականը: Հայ իրականութեան մէջ հանրագիտարանային ու համապարփակ այս աշխատանքը, իրօք, իր նախօրինակը չունեցող, խոշոր երեւոյթ է: Ինչպէս իրաւամբ նկատել է ակադէմիկոս Սերգէյ Սարինեանը՝ «*Յիրաւի համապարփակ, քանզի այստեղ շարժման մէջ է հայոց ժամանակը՝ ազգային, հասարակական, գաղափարական բարդ տեղաշարժերով: Դէպքերն ու դէմքերը ուղղակի թէ անուղղակի կապերով առնչուում են ազգային հանճարի կենսագրութեանը՝ իմաստաւորում, գնահատում, վերլուծում նրա հայեացքով: Եւ պէտք է դիտել միայն, թէ ինչպիսի հմտութեամբ է գրականագէտը ներհիւսում ժամանակագրութեան էջերը, բացայայտում, մեկնաբանում իրերի բնոյթը, ու համոզում ես, որ նա, միայն նա կարող էր կատարել այդ գործը, քանզի օժտուած էր անանձնական նուիրումով, նաեւ հարուստ կենսափորձով, մտաւոր զարգացմամբ եւ անհատապէս գիտակցուած աշխարհայեացքով»* (Գրական Թերթ, 13. 02. 2004): Զաքարեանն աշխատում էր այս կոթողային մենագրութեան յաջորդ հատորների վրայ, որոնց հրատարակմամբ էլ կ'ամբողջանար մեծն Չարենցի գիտական կենսագրութիւնը:

Զաքարեանը հայ գրականութեանն ու մշակոյթին անմնացորդ նուիրուած, հանրագիտարանային գիտելիքներով, հետազօտական եռանդուն էութեամբ, իր սկզբունքների մէջ անզիջում ու հետեւողական, անաչառ մտաւորական էր:

Այնպէս Զաքարեանը մահացաւ 28 Յուլիս 2013ին:

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ
patmhandes@rambler.ru



ԲՈՐԻՍ ԱՆԱՏՈՒԻ ԶՈՒՐԱՖՈՎ
(1945-2013)

Կեսնքի 69րդ տարում մահացավ գեղարուեստագետ, արուեստագիտության դոկտոր, Մոսկուայի Լոմոնոսովի Անուան Պետական Համալսարանի ուսուցչապետ, Գնեսինների Անուան Երաժշտական Ակադեմիայի եւ Մոսկուայի Երաժշտանոցին կից Չայկովսկու Անուան Կենտրոնական Երաժշտական Դպրոցի ուսուցչապետ, Հայաստանի եւ Ռուսաստանի Նկարիչների Միութիւնների անդամ Բորիս Զուրաբովը:

Ծնունդ է Երեւանում, 1945ի Յուլիսի 3ին, տոհմիկ մանկավարժների ընտանիքում: 1963ին ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ընդունուել է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Բաժնի Ռուսաց Լեզուի եւ Գրականութեան Բաժանմունք, որն ավարտել է 1970ին: 1970-1979՝ աշխատել է Հայաստանի Ազգային Պատկերասրահում, եղել գիտական քարտուղար:

1972ին ընդունուել է ԽՍՀՄ Գեղարուեստի Ակադեմիայի Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Բուս Ռեպինի Անուան Գեղանկարչութեան, Քանդակագործութեան եւ Ճարտարապետութեան Ինստիտուտի Արուեստի Պատմութեան Բաժինը, որն ավարտել է 1977ին: 1979-1982՝ եղել է Մոսկուայի Գեղարուեստի Ակադեմիայի ասպիրանտ: 1984ին Զուրաբովը պաշտպանել է թեկնածուականատենախօսութիւն «1930ական Թուականների Խորհրդային Հայաստանի Գրքի Գծանկարչութիւնը (ԽՍՀՄ Ժողովուրդների Արուեստի Հետ Փոխազդեցութեան Գործընթացում)» թեմայով եւ ստացել արուեստագիտութեան թեկնածուի աստիճան: Ասպիրանտուրան ավարտելուց յետոյ Զուրաբեանը վերադարձել է Երեւան եւ պաշտօնավարել Հայաստանի Նկարիչների Միութիւնում որպէս պատասխանատու քարտուղար (մինչեւ 1982): Միաժամանակ զբաղուել է ստեղծագործական աշխատանքով, հանդէս եկել գիտական գեկյոյցներով, կերպարուեստի պատմութիւն եւ գեղագիտութիւն դասաւանդել Պուշկինի Անուան Միջնակարգ Դպրոցում եւ Ռոմանոս Մելիքեանի Անուան Երաժշտական Ուսումնարանում: 1985-1993՝ արուեստի պատմութիւն, թանգարանային աշխատանք եւ գրքի ձեւաւորում է դասաւանդել Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստիտուտում:

1993ին տեղափոխուել է Մոսկուա, արեւմտաեւրոպական արուեստի պատմութիւն դասաւանդել Մոսկուայի Պետական Համալսարանում եւ Մոսկուայի Երաժշտանոցին կից Չայկովսկու Անուան Կենտրոնական

Երաժշտական Դպրոցում: 1999ին պաշտպանել է դոկտորական ատենախօսության՝ «ԺԹ. Դարի Վերջի, Ի. Դարի Սկզբի Հայ Նկարիչների Ստեղծագործությունը Ռուսաստանի Մշակութային Կեանքի Խորապատկերում» թեմայով: Մոսկուայում Զուրաբովը ռուսերեն հետազոտություններ է հրատարակել հայ անուանի նկարիչների եւ քանդակագործների մասին՝ *Յակոբ Կոջոյեան* (1982), *Արա Յարութինեան* (1986), *Գրիգոր Խանջեան* (1987, համահեղինակ՝ Նոնա Ստեփանեան), *Հմանուէլ Մահտեսեան* (1987, համահեղինակ՝ Լուկիան Մահտեսեան), *Յովհաննէս Զարդարեան* (1993): Նա հեղինակել է նաեւ Մոսկուայում ռուսերեն լոյս տեսած *Հայաստանի Պետական Պատկերասրահ. Գեղանկար, Գծանկար, Քանդակ* ալբոմ-մենագրությունը (1984): Նրա խմբագրութեամբ լոյս են տեսել բազմաթիւ այլ հրատարակություններ:

Բորիս Զուրաբովը մահացաւ 2013ի Սեպտեմբեր 21ին, Մոսկուայում:

ԱՐԾՈՒՒԻ ԲԱՆԶԻՆԵԱՆ

artsvi@yahoo.com



ԱՐԱՔՍԻ ԱՐԾՐՈՒՆ ՍԱՐԵԱՆ

(1937-2013)

76 տարեկանում կեանքից անժամանակ հեռացաւ Երաժշտագետ, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, Կոմիտասի Անուան Կոնսերվատորիայի Երաժշտութեան Պատմութեան Ամբիոնի բազմամեայ վարիչ, պրոֆեսոր Արաքսի Սարեանը:

Արաքսի Սարեանը (Յարութինեան) ծնուել է 1937 Օգոստոսի 17ին Լենինականում (այժմ՝ Գիւմրի), մտաւորականի ընտանիքում: Հայրը դերասան էր, Լենինականի Դրամատիկական Թատրոնի հիմնադիրներից եւ երկարամեայ տնօրէնը, ՀԽՄՀ ժողովրդական արտիստ, մայրը՝ մանկավարժ: Հօրեղբայրը՝ Վարազդատ Յարութինեանը, անուանի ճարտարապետ էր, ակադեմիկոս, ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր, հայ ճարտարապետութեան պատմութեանը նուիրուած բազմաթիւ արժեքաւոր աշխատությունների հեղինակ, ճարտարապետութեան Ամբիոնի վարիչ եւ Հայաստանի ճարտարապետների Միութեան նախագահ:

Սարեանը սովորել է Լենինականի Ա. Պուշկինի անուան միջնակարգ դպրոցում (աւարտել՝ ոսկէ մեդալով) եւ Քրիստափոր Կարա-Մուրզայի Անուան Երաժշտական Ուսումնարանում (գերազանց դիպլոմով): 1955ին ընդունուել է Երեւանի Պետական Բժշկական Ինստիտուտ: Սակայն

գերազանց թուանշաններով երկրորդ դասարան փոխադրուելուց յետոյ, նա թողել է Ինստիտուտը եւ ընդունուել Երեւանի Կոմիտասի Անուան Կոնսերվատորիայի Պատմա-Տեսական Բաժինը:

1961ին Կոնսերվատորիան աւարտելուց յետոյ դարձել է Գիտութիւնների Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի ասպիրանտ, գիտական ղեկավար ունենալով անուանի երաժշտագէտ Ռոբերտ Աթայեանին: 1965ին աւարտելով ասպիրանտուրան, որպէս կրտսեր գիտաշխատող աշխատանքի է անցել նոյն ինստիտուտում: 1969ին յաջողութեամբ պաշտպանելով «Հայ Քաղաքային Ժողովրդական Երգարուեստը (19-20րդ դդ.)» թեմայով ատենախօսութիւնը, ստացել է արուեստագիտութեան թեկնածուի գիտական աստիճան:

Կոնսերվատորիայում ուսանելուն զուգահեռ Սարեանը աշխատել է Պետական Ռադիօկոմիտեում որպէս երաժշտական խմբագիր եւ տեսական առարկաներ է դասաւանդել Տիգրան Զուխաջեանի եւ Պիոտր Զայկովսկու անուան միջնակարգ երաժշտական դպրոցներում:

1968ից մինչեւ կէսնքի վերջին օրը նա դասախօսել է Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայում, վարելով երաժշտութեան պատմութեան տարբեր դասընթացներ: Յատկապէս նշանակալից էին նրա Երաժշտութեան Պատմութեան իբրեւ ամբիոնի վարիչ պաշտօնավարելու տարիները, ամբիոն, որը նա ղեկավարում էր մինչեւ իր մահը: Այդ տարիների ընթացքում ամբիոնի դասախօսական կազմը նկատելիօրէն թարմացուեց երիտասարդ կարող ուժերով, ինչը մեծապէս նպաստեց ամբիոնի մասնագիտական մակարդակի բարձրացմանը:

Սարեանի երաժշտագիտական գործունեութիւնը բազմազան էր եւ ընդգրկուն: Նրա եռանդը, սկզբունքայնութիւնը, շահագրգիռ վերաբերմունքը՝ մասնագիտական ոլորտի այլեւայլ հարցերին եւ երաժշտական կէսնքի տարբեր դրսեւորումներին, նրան դարձրեցին հանրապետութեան առաջատար երաժշտագէտներից եւ երաժշտական-հասարակական գործիչներից մէկը: Նրա գիտական, մանկավարժական, լուսատրական, հրապարակախօսական գործունեութիւնը մթնոլորտ էր ստեղծում, ոգեւորում եւ օրինակ հանդիսանում երիտասարդների համար: Հայ երաժշտութեանը նուիրուած գիտական գեկուցումներով Սարեանը մասնակցել է բազմաթիւ հանրապետական, միութենական եւ միջազգային գիտաժողովների, որոնցից յատկապէս յիշատակելի են ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի, Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան եւ ԵՌԽՆԵՄԿՕի համատեղ՝ հոգեւոր եւ աւանդական երաժշտութեանը նուիրուած, Գրիգոր Նարեկացու *Մատենան Ռդերբրգութեան* պոէմի ստեղծման 1000ամեակին Փարիզում՝ Արեւելեան Լեզուների Եւ Մշակոյթների Ազգային Ինստիտուտի (INALCO), Արամ

Խաչատրեանի 110ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովներում նրա ունեցած էլոյթները:

Սարեանը հրաշալի հռետոր էր: Անմոռանալի են նրա դասախօսութիւնները, բազմաթիւ ներածականները համերգերից առաջ: Բեմական խօսք, որը միշտ բովանդակալից էր, տարողունակ, մատչելի եւ տպաւորիչ, ինչպէս մասնագիտական, այնպէս էլ՝ ամենալայն լսարանի համար:

Երաժշտագէտի գործունեութեան բեղուն բնագաւառներից էին ռադիօ եւ հեռուստատեսային հաղորդումները: Յաճախ է վարել հեռուստատեսութեամբ հայ, ռուսական եւ եւրոպական երաժշտութեանը, տարբեր կատարողներին նուիրուած հաղորդաշարեր, հանդէս եկել բազմաբնոյթ էլոյթներով: Երաժշտարուեստին նուիրուած բազմաթիւ յօդուածներով Սարեանը հանդէս է եկել միութենական եւ հանրապետական մամուլում՝ ամսագրերում եւ թերթերում:

Նրա գիտական մտքի արգասիքն են մի շարք մենագրութիւններ եւ գրքեր, որոնցից նշելի են «Հայ Քաղաքային Ժողովրդական Երգարուեստը. 19-20րդ դդ». (*Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւստիւն, Պրակ 4*, 1973), *Մեղէա Աբրահամեան* (համահեղինակ՝ Աննա Բարսամեան, 2000), *Երաժշտութեամբ Իմաստաւորուած Կեանք. Միրվարդ Գարամանուկի Կեանքն Ու Ստեղծագործութիւնը* (2007), *Թաթուլ Այթունեանը Եւ Հայ Երգն Ու Պարը* (2008), *Երաժշտութիւնը՝ Կեանքի Ուղեկից. Ջութակահար Լենոն Մամիկոնեանի Կեանքն Ու Ստեղծագործական Ուղին* (2009), *Սամսոն Գասպարեան. Երաժշտագէտն Ու Գործիչը* (2010), *Հայ Քաղաքային Ժողովրդական Երգի Հատընտիր* (առաջաբանի հեղինակ եւ կազմող, 2010) եւն.:

Արաքսի Սարեանը վարել է գործօն հասարակական գործունեութիւն: Նա տարիներ շարունակ, մինչեւ իր մահը, Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան Երաժշտագիտական Մասնաճիւղի նախագահն էր, ՀԿՄ Վարչութեան անդամ, ՀՀ Պետական մրցանակների երաժշտութեան գծով յանձնաժողովի նախագահ:

1968ին Արաքսի Սարեանն ամուսնացել է անուանի կոմպոզիտոր Ղազարոս Սարեանի հետ եւ դարձել մեծ վարպետի՝ Մարտիրոս Սարեանի ընտանիքի նուիրուած անդամն ու օջախի պահապանը: Ունեցել է երկու դուստր՝ վաղամեռիկ տաղանդաւոր դաշնակահարուհի Լուսիկ Սարեան եւ արուեստաբան Սոֆիա Սարեան, որը ներկայումս Մ. Սարեանի տուն-թանգարանի գլխաւոր ֆոնդապահն է:

Սարեանը մեծ ներդրում ունեցաւ նաեւ իր ամուսնու արխիւի եւ ստեղծագործական ժառանգութեան ուսումնասիրութեան եւ հրապարակման գործում: Այդպէս, իր աշխատասիրութեամբ լոյս տեսան *Ղազարոս Սարեանը Եւ Իր Ժամանակը* (2001), *Նամակներ*

Ռազմաճակատից (2005), Ղ. Սարեանի սիմֆոնիկ եւ կամերային երկերն ամփոփող լազերային խոսասարկները եւ վերջին գործը, որն, աւաղ, լոյս տեսաւ իր մահուանից յետոյ՝ *Ղազարոս Սարեանը եւ իր ժամանակը* (2013)՝ յողուածների, նամակների եւ յուշագրութիւնների ժողովածուի զգալիօրէն համալրուած եւ ընդլայնուած երկրորդ հրատարակութիւնը, որը, կարծես, իր հոգու պարտքն էր սիրելի ամուսնու, մեծ երաժշտի, մտաւորականի եւ Կոմիտասի Անուան Կոնսերվատորիայի 26 տարիների հմուտ ռեկտորի (նաեւ իր ուսանած տարիների ռեկտորի) յիշատակի առջեւ: «Ղազարոս Սարեանի հետ ապրեցի երեսուն տարի: Ապրեցի որպէս աշակերտ՝ ունենալով, սակայն, յստակ որոշարկուած բնաւորութիւն: Հիմա աւելի խորն եմ գիտակցում, որ ներքին իմ ընդվզումների (շրջապատի, մարդկանց, կեանքի երեւոյթների հետ կապուած) նրա բացատրութիւնները ճշմարիտ էին, գուցէ՝ փիլիսոփայօրէն ճշմարիտ... Բայց դա օգնում էր իրեն եւ մեզ, ընտանիքի անդամներին, զերծ մնալ մանրունքներից, ճղճիմ քաղքենիական վարքագծից: Դա, անշուշտ, անհրաժեշտ էր ստեղծագործական կեանքով ապրելու համար (ժամանակաւոր այս կեանքում...), ինչն իր տոհմական ամենակարեւոր ժառանգութիւնն էր», գրել է Սարեանը իր՝ *Ջնջիր Պատահական Գծերը* յուշագրութեան մէջ:

Արաքսի Սարեանը արժանացել է բազմաթիւ պարգեւների: 2008ին ստացել է ՀՀ արուեստի վաստակաւոր գործչի կոչում, 2011ին՝ Ազգային Ժողովի Պատուաւոր Մեդալ, ունի նաեւ այլ մեդալներ եւ շնորհակալագրեր:

Արաքսի Սարեանի պայծառ յիշատակն ընդմիշտ կը մնայ նրան ճանաչող եւ նրա հետ շփուած մարդկանց սրտերում: Իսկ մեզ՝ նրա երախտապարտ սաներին եւ մտերիմներին մնաց նրա լուսաւոր եւ կենսասէր կերպարը, միաժամանակ՝ ճակատագրի բերումով անարդարացիօրէն ընդհատուած գրոյցի, կիսատ երկխօսութեան զգացումը...

Արաքսի Սարեանը մահացաւ 2013 Մեպտեմբեր 26ին:

ԱՆՆԱ ԱՐԵՒԵՇԱՏԵԱՆ

anna_arevshatyan@hotmail.com

ՄՀԵՐ ՍՏԵՓԱՆԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

(1939-2013)



Հայ պատմագիտութիւնն անդառնալի կորուստ կրեց. 73 տարեկան հասակում ծանր հիւանդութիւնից յետոյ կեանքից հեռացաւ նշանաւոր պատմաբան եւ մանկավարժ, հայ

ժողովրդի նոր դարի պատմության եւ հայ պատմագրության յայտնի մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքր Կարապետեանը:

Կարապետեանը ծնունդ է 1939 Ղեկտեմբերին Երեւանում: 1959-1962՝ ուսանել է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի (ՀՊՄՀ) Պատմալեզուական Ֆակուլտետում: Հայոց պատմության գծով ՀՊՄՀի ասպիրանտուրայում ուսումնառությունն ավարտելուց յետոյ նա աշխատանքի է անցել նոյն հիմնարկում իբրեւ գիտական քարտուղար (1967-1975): Նրա ամբողջ գործունեությունը կապուած է եղել միայն ՀՊՄՀի հետ, որտեղ 1975-1995ին աշխատել է իբրեւ Հայոց Պատմության Ամբիոնի դասախօս, իսկ 1996ին դոկտորական ատենախօսութեան պաշտպանութիւնից յետոյ՝ 1997ից մինչեւ մահ ղեկավարել է նոյն ամբիոնի աշխատանքները վարիչի կարգավիճակով:

Իբրեւ պատմաբան՝ Կարապետեանն իր գիտական գործունեութեան ընթացքում ուշադրութիւնը բեւեռել է հայ ժողովրդի ԺԹ. դարի երկրորդ կեսի եւ Բ. դարի սկզբի կնճռոտ հիմնահարցերի ուսումնասիրութեան ասպարեզում խորհրդահայ եւ սփիւռքահայ պատմագրութեան, ինչպէս նաեւ յետխորհրդային ժամանակաշրջանի հայ պատմագիտութեան նուաճումների մեկնաբանութեան վրայ: Նրա հետաքրքրութիւնները կենտրոնացուած էին գլխաւորապէս Հայոց Ցեղասպանութեան եւ հայկական ազատագրական շարժումների պատմութեան հիմնախնդիրների շուրջ իրականացուած հետազոտութիւնների քննական վերլուծութեան, մասնաւորապէս խորհրդահայ պատմագիտական մտքի էլեւէջների վերհանման եւ արժեւորման վրայ:

Կարապետեանը հեղինակել է մի շարք մենագրութիւններ՝ *Հայոց 1915-1916 Թուականների Ցեղասպանութեան Հարցերը Հայ Պատմագրութեան Մէջ* (1999), *Հայոց 1915-1916 Թուականների Ցեղասպանութեան Հիմնահարցերը Յետխորհրդային Հայ Պատմագրութեան Մէջ* (2005), *ԺԹ. Դարի Երկրորդ Գեսի Հայ Ազգային-Ազատագրական Շարժման Խորհրդահայ Պատմագրութիւնը (1921-1991 թթ.)* (Է. Գեորգեանի եւ Է. Մելքոնեանի հեղինակակցութեամբ, 2010), *Հայոց Մեծ Եղեռնի Պատմութեան Հիմնահարցերը Հայ Պատմագրութեան Մէջ* (Է. Գեորգեանի, Է. Մելքոնեանի եւ Ա. Աբգարեանի հեղինակակցութեամբ, 2010), որոնց մի մասը թղթին է յանձնել իր աշակերտների հեղինակակցութեամբ: Հիմնալի կողմնորոշումներ ունենալով պատմական գիտութեան ամենաբարդ բնագաւառի՝ պատմագրութեան առեջններում, նա մանրագին գիտական քննութեան էր ենթարկում իր կողմից ուսումնասիրուող թեմաներին անդրադարձած հեղինակների աշխատութիւնները՝ սկսած իրադարձութիւնների

ժամանակակիցներից, որոնց նշանակալից մասը պատմաբաններ չէին եղել, մինչև իր օրերի արհեստավարժ պատմաբանները: Բացի դրանից, նա չէր անտեսում արդիական հնչեղություն ունեցող՝ տարբեր երկրների խորհրդարաններում Հայոց Ցեղասպանության խնդրի քննարկումների մեկնաբանությունը, ինչպես նաև հայ ժողովրդի համար մեծ կարևորություն ունեցող՝ Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման միջազգային գործընթացների լուսաբանումը:

Ի տարբերություն այլոց, Կարապետեանի՝ իբրեւ ՀԳՄՀի դասախօսի տեսադաշտից չի վրիպել եւս մէկ կարեւոր հանգամանք՝ բոհական դասագրքերի պատրաստման խնդիրը: Նա պատշաճ ուշադրություն էր դարձնում՝ ԻԱ. դարում պատմական գիտության նուաճումների լոյսի ներքոյ, Հայաստանի Հանրապետության ուսանողութեանը դասագրքեր մատուցելու շնորհակալ աշխատանքին: Նրա գրչին են պատկանում *Հայաստանը 1912-1920 Թուականներին* (2003), *Խորհրդային Հայաստանը 1920-1991 Թուականներին*, (Է. Գ. Գեորգեանի հեղինակակցութեամբ, 2007), *ԺԹ. Դարի Երկրորդ Կեսի Հայ Ազգային-Ազատագրական Շարժման Հիմնահարցերը Մինչխորհրդային Հայ Պատմագրութեան Մէջ* (2008), *Նոր Նիւթեր Հայոց Պատմութեան Մասին* (Է. Գեորգեանի եւ Է. Մելքոնեանի հեղինակակցութեամբ, 2009) ուսումնական ձեռնարկները: Իր առջեւ ծառացած գերխնդիրը հեղինակը մեկնաբանել է նշուած դասագրքերից մէկի առաջաբանում, հաւաստելով, որ համակուած է *«ուսանողութեան կողմից նիւթի իւրացումն առաւել մատչելի դարձնելու մտահոգութեամբ»*: Այս առումով, Հայաստանի Հանրապետութեան ԲՈՒՀների ուսանողները չեն կարող, անտարակոյս, նրան խիստ երախտապարտ չլինել, առաւել եւս, որ նրա հեղինակած դասագրքերը ՀՀ Ազգային Գրադարանում միշտ գտնուում են նրանց գրասեղանների վրայ: Ակնյայտ է Կարապետեանի անուրանալի աւանդը հայ պատմագիտական մտքի զարգացման եւ ԲՈՒՀական դասագրքերի պատրաստման խրթին ասպարեզներում: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ նա ըստ այդմ պարզեատրուել է *«Մովսէս Խորենացի»*, *«Նաչատուր Աբովեան»*, *«Դրօ»* մեղալներով եւ *«Ֆրիտիօֆ Նանսէն»* յուշամեղալով:

Հանգուցեալ պատմաբանն աչքի էր ընկնում պատմական գիտութեան հանդէպ պատասխանատւութեան բարձր զգացումով: Իւրաքանչիւր գրքի կամ յօդուածի վրայ նա աշխատում էր բծախնդրօրէն, ջանալով իր մեկնագրութիւններում եւ ակնարկներում չշրջանցել նախորդների կարեւոր աշխատութիւններից եւ ոչ մէկը: Այս առնչութեամբ նա յաճախ խորհրդակցում էր տողերիս հեղինակի հետ, իսկ երբեմն երեկոյեան զանգահարում ինձ եւ ընթերցում այս կամ այն ատենախօսութեան մասին իր գրաւոր կարծիքը՝ իմ առաջարկութիւններն ու դիտողութիւնները հաշուի առնելու ակնկալութեամբ: Ի դէպ, նշուած տարբեր դասագրքերի

առաջաբաններում, ելնելով ընդհանուր գործի շահերից, նա ոչ միայն պատրաստակամություն էր յայտնում «սիրով եւ շնորհակալութեամբ» ընդունելու ընթերցողների «բոլոր դիտողութիւններն ու ցանկութիւնները», այլեւ «կանխաւ շնորհակալութիւն» էր յայտնում «բոլոր նրանց, ովքեր կ'ունենան ձեռնարկի յետագայ բարելամանն ուղղուած դիտողութիւններ ու առաջարկութիւններ»:

Կարապետեանը խիստ բարեացակամ եւ ընդառաջող անձնավորութիւն էր: Նա երբեւէ չէր մերժում դոկտորական եւ թեկնածուական ատենախօսութիւնների պաշտպանութիւնների ժամանակ իբրեւ պաշտօնական ընդդիմախօս հանդէս գալու առաջարկութիւնները: Նրա եւ ոչ մի գործընկեր նման յաճախականութեամբ չէր ստանձնում ընդդիմախօսի կարգավիճակ: Միաժամանակ հայկական ամսագրերում (*Պատմաբանասիրական Հանդէս*, *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, եւն.) նա սեփական նախաձեռնութեամբ պարբերաբար գրախօսում էր իր գործընկերների գրքերը եւ դրանք անկողմնակալ գնահատում: Այս ուղղութեամբ Կարապետեանի ներդրած ջանքերն անառարկելիօրէն վկայում էին ոչ միայն գործընկերներին օգնութեան ձեռք մեկնելու նրա անշահախնդիր պատրաստակամութեան, այլեւ գիտական գրախօսութիւնների՝ իբրեւ պատմաբանի աշխատանքային գործունեութեան անբակտելի մասը կազմող ոլորտի կարեւորութիւնը յաւուր պատշաճի ըմբռնելու մասին, ինչը հայ իրականութեան մէջ հասանելի է սակաւաթիւ պատմաբանների:

Օժտուած գիտութեան կազմակերպչի անժխտելի ունակութիւններով՝ Կարապետեանն իր ժամանակը հաճոյքով տրամադրում էր երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին: Նա ոչ միայն ուսանողների համար դասագրքեր էր գրում, այլեւ գիտութեամբ զբաղուելու ցանկութիւն դրսեւորողներին օժանդակում էր թեկնածուական ատենախօսութիւնների թեմաների ընտրութեան հարցում, հոգատարօրէն ղեկավարում նրանց աշխատանքները, այնուհետեւ սերտօրէն համագործակցում իր տարբեր աշակերտների հետ:

Երջանկայիշատակ պատմաբանին բնորոշ էր եզակի առանձնայատկութիւն, որը նրան մեծապէս զանազանում էր նրա գործընկերների գերակշռող մասից. նա երբեք մոռացութեան չէր մատնում մեծ պատմաբանների յիշատակը, նոյնիսկ նրանց, որոնց հետ անձնական շփումներ չէր ունեցել: Մեր երկարատեւ զրոյցների ընթացքում նա բարձր կարծիքներ էր յայտնում Նիկողայոս Ադոնցի, Աշոտ Յովհաննիսեանի, Աբգար Յովհաննիսեանի, Մկրտիչ Ներսիսեանի մասին, որոնց վերաբերում էր անթաքոյց եւ անկեղծ ակնածանքով, թէւ նրանցից բոլորի հետ չէ որ անմիջականօրէն առնչուել էր: Ներսիսեանի

մասին, որի հետ գիտական երկարատև առնչություններ էր ունեցել, նա ոչ միայն չէր զլանում նրա մահից յետոյ յօդուածներ գրել, այլև նրա յիշատակին է նուիրել իր *ԺԹ. Դարի Երկրորդ Կեսի Հայ Ազգային-Ազատագրական Շարժման Խորհրդահայ Պատմագրությունը (1921-1991 թթ.)* մենագրությունը:

Լինելով հայ ժողովրդի նոր դարի պատմութեան տարբեր հիմնահարցերի մասնագետ՝ Կարապետեան, այդուհանդերձ, խորին յարգանքով էր արտայայտում նաև խորհրդային ականաւոր, աշխարհահռչակ պատմաբանների մասին, ինչպիսիք են Եւգենի Տարլէն եւ Ալբերտ Մանֆրէդը, որոնք իրենց ստեղծագործական ուժերը ներդրել էին Արեւմտեան Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսիայի նոր դարի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում:

Լինելով զուսպ եւ հաւասարակշռուած, Կարապետեանը խուսափում էր զրուցել այն անձանց մասին, որոնց նկատմամբ համակրանք չէր տաճում, ինչը բացայայտօրէն զգացում էր: Փոխարէնը՝ իր աշխատակիցների ներկայութեամբ, նա անաչառօրէն կարծիքներ էր յայտնում գիտութեան անմնացորդ նուիրեալների մասին, որոնց՝ իբրեւ արհեստավարժ եւ խորահմուտ պատմաբան, ի վիճակի էր, ի տարբերութիւն շատերի, գնահատելու ըստ արժանւոյն:

Կարապետեանի մահը մեծ կորուստ էր թէ՛ ՀՊՄՀի եւ թէ՛ հաւասարապէս հայ պատմագիտութեան համար: Նրա յիշատակն անմար կը մնայ ոչ միայն նրա աշակերտների, այլև բոլոր նրանց սրտերում, ովքեր վայելել են նրա հետ համագործակցելու եւ շփումներ ունենալու բերկրանքը, իսկ նրա գրքերը պատմաբանների ապագայ սերունդների ներկայացուցիչներին կ'ուղղորդէն ճիշտ կողմնորոշուելու հայ պատմագրութեան բարդ քառուղիներում:

Կարապետեանը մահացաւ 2013ի Հոկտեմբերի 22ին, Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan.poghosyan@mail.ru

ԱՐՄԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ (1937–2013)



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Արսէն արքեպիսկոպոս Բերբերեանը (աւագանի անունով՝ Պետրոս) ծնուել է 1937 Հոկտեմբերի 26ին, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Նախնական կրթութիւնը ստացել է տեղի Հայկազեան Վարժարանում: 1947ին ընտանիքի հետ ներգաղթել

է Հայաստան եւ հաստատուել Գիւմրի Քաղաքում: 1955-1960՝ սովորել է

Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում եւ ամբարտաճառ գրել Կոմիտաս վարդապետի հոգեւոր անտիպ երգերի վերաբերեալ:

1960-1962՝ հետեւել է Զագորսկի Հոգեւոր Ակադեմիայի դասընթացներին: 1962ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ եւ վերանուանուել Արսէն: 1963ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Ս. Ներսէս Շնորհալու Տաղերի Եղանակները» թեմայով: 1967ին մեկնել է Ժընեւ, ուր 1967-1968՝ ուսանել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ինստիտուտում:

1968-1973՝ սովորել է Լոնդոնի Արքայական Երաժշտական Ակադեմիայում, կատարել համայնքի հոգեւոր հովուի պաշտօնը, միաժամանակ եղել Լոնդոնի Արքայական Քոլէջի ասպիրանտ, որն ամբարտեղով պաշտպանել է թեզ «Հայ ժողովրդի Յարաբերութիւնները Անգլիկան Եկեղեցու Հետ 1850-1905 թթ.» թեմայով եւ ստացել փիլիսոփայութեան դոկտորի կոչում: Սրբազան աշխատել է Լոնդոնի գրադարանների արխիւային բաժիններում, Քենթըբըրիի եպիսկոպոսութեան արխիւներում: Սա հայ-անգլիական յարաբերութիւնների մինչ օրս չբացայայտուած մի շարք հարցերի ու եղելութիւնների հետեւելու բացառիկ հնարաւորութիւն է: Այս անգլերէն աշխատութիւնը (*The History of Armenian and Anglican United Church 1845-1905*) լոյս է տեսել 2007ին: Աշխատութիւնը ներկայացնում է հայ-անգլիական եկեղեցական յարաբերութիւնները ԺԹ դարում՝ ընդգրկելով առաւելապէս Արեւմտեան Հայաստանի Այնթապ-Մարաշ-Հաճըն-Դիարբեքիր-Ջէթոն-Կիլիկիա հայաշատ նահանգներն ու գաւառները, քննում հայ ժողովրդի պատմութեան, դաւանաբանական, եկեղեցական յարաբերութիւնների, ընկերային-տնտեսական, քաղաքական իրավիճակը:

1973ին վերադառնալով Մայր Աթոռ՝ Բերբերեանը ստացել է ծայրագոյն վարդապետի աստիճան, ապա 6 ամիս անց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վագգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրուել է եպիսկոպոս: 1973-1982՝ վարել է Ս. Էջմիածնի Միջազգային Յարաբերութիւնների Բաժնի վարիչի եւ դիւանապետի պաշտօնը: 1982-1985՝ եղել է Երեւանի Արարատեան Թեմի առաջնորդական փոխանորդ: 1985-1988՝ Շուշիայի հոգեւոր հովիւ, կարգաւորել է եկեղեցական աշխատանքները, Ուփսալայում վարձել շէնք՝ եկեղեցական արարողութիւնների համար: 1990-1996՝ եղել է Գուգարքի Թեմի առաջնորդ: 1992ին ստացել է արքութեան տիտղոս: 1996-1998՝ իր ծառայութիւնն է բերել ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմում: 2010ին նշանակուել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ հայաստանեան թեմերում եւ փոխառաջնորդութիւններում:

Տ. Արսէն արքեպիսկոպոս Բերբերեանը եղել է Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտէի անդամ, Շուեդիայի Եկեղեցիների Էկումենիկ Խորհրդի նախագահ, մասնակցել է միջազգային բազմաթիւ ժողովների: Արսէն սրբազանը հեղինակ է նաեւ այլ ուսումնասիրութիւնների, պատմական ու երաժշտական դասագրքերի, հրապարակախօսական յօդուածների եւ այլ աշխատութիւնների, հոգեւոր երգերի ու շարականների ձայնապնակների ու ձայնագրութիւնների: Նրա վերջին տպագրուած գործն էր *Հոգեւոր Մտորումները* (2013):

Տ. Արսէն արքեպիսկոպոս Բերբերեանը վախճանուեց 2013 Նոյեմբերի 16ին, Էջմիածնում եւ թաղուեց Մայր Աթոռի միաբանական գերեզմանատանը:

ՀՀՀ

